ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

<<06>> <<մարտի>> 2019թ. N 178

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ.Մաթևոսյանին

Մեծարգո պարոն Մաթևոսյան

Ի կատարումն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի չորրորդ մասի պահանջների, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 19-ից մինչև ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածի ընդունած որոշումները /թիվ54-59/:

Համայնքի ղեկավարը կարգադրություն չի արձակել :

Առդիր 8 /ութ/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ԱՐԵՎՀԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ.՝ Ա. Սաֆարյան

1139 համայնք Մերձավան Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1, հեռ. (096) 11-00-44, էլ. փոստ merdzavan.armavir @ mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

19 ապրիլի 2019 թվականի N54-Ա

ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 13-ի N41-Ա որոշումը , **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակիչ Ավետիք Յուրիկի Տոնոյանին տրամադրել 50 000 ՀՀ դրամ դրամական օգնություն երեխայի՝ Մարիամ Ավետիքի Տոնոյանի ծննդյան կապակցությամբ /ծնված 2019 թվականի ապրիլի 16-ին, հիմք ծննդյան վկայական ԲԱ1070095, տրված 05.03.2019թ. Վաղարշապատի ՔԿԱԳ տարածքային բաժնից՝ 2019 թվականի ապրիլի 17-ին/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ԱՐԵՎՀԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ**

2019 թվականի ապրիլի 19

 հ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2019 թվականի N55-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը և համաձայն 2019 թվականի ապրիլի 22-ին <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ից /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ստացված հողամասի հատակագծի, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման 0,0035 հեկտար հողամասի վրա կառուցված 35,0 քառակուսի մետր մակերեսով /արտաքին/ վարսավիրանոցին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն մարզ Արմավիրի համայնք Մերձավան Երևանյան խճուղի N63/4:

2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ

2019 թվականի ապրիլի 22

ք. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2019 թվականի N56-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի188-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N731-Ն ու N912-Ն որոշումների դրույթներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, համայնքային նշանակության քաղաքացիական համալիր ծրագրերին և նրա զբաղեցրած հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և համաձայն 2019 թվականի ապրիլի 22-ին <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ից /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ստացված հողամասի հատակագծի, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի Երևանյան խճուղու N63/4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման 0,0035 հեկտար հողամասի վրա ինքնակամ կառուցված 35,0 քառակուսի մետր /արտաքին/ մակերեսով վարսավիրանոցը ճանաչել օրինական և համարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի սեփականությունը:

2. Բանավոր առաջարկություն անել ինքնակամ շինությունն իրականացրած անձ Վահան Հայկի Համբարձումյանին՝ օրինականացված 35,0 քառակուսի մետր /արտաքին/ մակերեսով վարսավիրանոցը և 0,0035 հեկտար հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով գնելու համար:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ԱՐԵՎՀԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ**

2019 թվականի ապրիլի 22

ի. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2019 թվականի N57-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը և համաձայն 2019 թվականի ապրիլի 26-ին <<ԱՎԱԳ-ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿԻ>> ԱՁ-ից /որակավորման վկայական 0331, տրված 2014 թվականի մայիսի 14-ին/ ստացված հողամասի հատակագծի, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության խառը կառուցապատման 0,0064 հեկտար հողամասի վրա կառուցված 108,7քառակուսի մետր արտաքին մակերեսով շենք- շինություններին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն մարզ Արմավիրի համայնք Մերձավան Երևանյան խճուղի N15/16:

2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ

2019 թվականի ապրիլի 29

հ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2019 թվականի N58-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի188-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N731-Ն ու N912-Ն որոշումների դրույթներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, համայնքային նշանակության քաղաքացիական համալիր ծրագրերին , նրա զբաղեցրած հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և համաձայն 2019 թվականի ապրիլի 26-ին <<ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿԻ>> ԱՁ-ից /որակավորման վկայական 0331, տրված 2014 թվականի մայիսի 14-ին/ ստացված հողամասի հատակագծի, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի Երևանյան խճուղու N15/16 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նշանակության խառը կառուցապատման 0,0064 հեկտար հողամասի վրա ինքնակամ կառուցված 108,7 քառակուսի մետր /արտաքին/ մակերեսով շենք- շինությունները ճանաչել օրինական և համարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի սեփականությունը:

2. Բանավոր առաջարկություն անել ինքնակամ շենք - շինությունները իրականացրած անձ Արտավազդ Վասիլի Հովհաննիսյանին՝ օրինականացված 108,7

քառակուսի մետր արտաքին մակերեսով շենք- շինությունները և 0,0064 հեկտար հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով գնելու համար:

3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ

2019 թվականի ապրիլի 29

 հ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2019 թվականի N59-Ա

ԿԱՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշման դրույթներով, հիմք ընդունելով 2019թվականի ապրիլի 17-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանից ստացված թիվ 01/7/02352-2019 գրությունը , քաղաքացի Կարեն Ավետիսյանի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի դիմումը և համաձայն 2019 թվականի ապրիլի 25-ին <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ից /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ստացված հողամասի հատակագծի, **որոշում եմ.**

1. Կարեն Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 1-ին փողոց N55 հասցեում գտնվող 0,1769 հեկտար մակերեսով / կադաստրային ծածկագիր 04-065-0022-0014, սեփականության իրավունքի վկայական 2732862/ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 0,1 հեկտար հողամասի գործառնական նշանակությունը փոխել, որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության հողամասի, ըստ հատակագծի նշված հատվածում, առևտրի սրահ կառուցելու համար:

2. Մերձավան համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն՝ 0,1769 հեկտար մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից հանել 0,1հեկտար հողամասը և ներառել բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի հաշվեկշռում:

3. Հողամասի հասցեն թողնել անփոփոխ՝ Արմավիրի մարզ համայնք Մերձավան 1-ին փողոց N55:

4. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանումում:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ

2019 թվականի ապրիլի 29
ք. Մերձավան